

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է


**ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ**

29.05.2003թ.

Արձանագրություն թիվ 01

ԳԻՏՈՐԳ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ

[Handwritten signature]
Լ. ԲԱՐԽՈՒՂԱՐՅԱՆ



ԳՐԱՆՑՎԱԾ Է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ**

« 4 » *հունիսի* 2003թ.

Գրանցման N 50

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

[Handwritten signature]
Տ. ՍԱՐԳՍՅԱՆ




ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն N 17)

«ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ



ՀՈԳՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայներարտբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) ստեղծվել է Բանկի Հիմնադիրների (բաժնետերերի) 1992թ. հուլիսի 24-ի Ընդհանուր Ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 1), իսկ 1995թ. ապրիլի 14-ի բաժնետերերի ժողովի որոշմամբ վերածվել է բաժնետիրական բանկի՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ:

1.2. Բանկը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար: Իր ստեղծման և գործունեության ընթացքում բանկը ենթարկվում է Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին:

1.4. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.5. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, իր անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, անկյունային դրոշմակնիք և համարային կնիքներ բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների համար:

1.6. Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է՝

- հայերեն՝ **”Հայկական ներմուծման-արտահանման բանկ” փակ բաժնետիրական ընկերություն**
- կրճատ՝ **”ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ” ՓԲԸ**
- ռուսերեն՝ **Акционерное общество закрытого типа ”Армянский импортно-экспортный банк”**
- կրճատ՝ **АОЗТ”АРМИМПЭКСБАНК”**
- անգլերեն՝ **”Armenian Import Export Bank” Closed Joint-Stock Company**
- կրճատ՝ **”ARMIMPEXBANK” CJSC**

1.7. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը օրենքով սահմանված կարգով:

1.8. Բանկի հաճախորդների բանկային ավանդները և բանկին ի պահ հանձնված նրանց դրամական միջոցները և այլ գույքը կարող է բռնագրավվել, դրանց վրա կարող է կալանք (արգելանք) դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ իրավասու պետական մարմինների կողմից:

1.9. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.10. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.11. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր կամ պատասխանող ընդհանուր իրավասության դատարանում, տնտեսական դատարանում, միջնորդ դատարանում:

1.12. Բանկը կրում է օրենսդրությամբ բանկին վերապահված իրավունքներ ու պարտականություններ, անկախ դրանք սույն կանոնադրությամբ նախատեսված լինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է սահմանված:

1.13. Բանկի իրավաբանական հասցեն է.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 2:

ՀՈԳՎԱԾ 2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

- 2.1. Բանկը կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները՝
 - ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.
 - բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
 - գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).
 - դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

- ն) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները:
 - զ) բաղարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, համապատասխան չեկեր, քարտեր և այլ գործիքներ, նման այլ գործառնություններ կատարել:
 - է) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել:
 - ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անհատն առժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում):
 - թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) նույնպատրոններ և հուշադրամ:
 - ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:
 - ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ):
 - ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ:
 - ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն:
 - ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի ետ ստացման գործունեություն:
 - ժե) ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ իրականացնել սույն Կանոնադրությամբ ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ:
- 2.2 Բանկը կարող է սույն Կանոնադրության 2.1 կետով նախատեսված գործառնությունները կատարել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով, այնպես էլ արտարժույթով:
- 2.3 Բանկի լիցենզավորման ենթակա բոլոր գործառնությունները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալուց հետո:
- 2.4 Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, ինել հայցվոր և պատասխանող դատարանում և միջնորդ դատարանում:
- 2.5 Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական կանոնադրություն ստանալով ՀՀ Կենտրոնական բանկից և հետո հաշվառվելով ՀՀ Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման փաստը վկայող փաստաթուղթը:
- 2.6 Ներկայացուցչությունները և մասնաճյուղերը գործում են բանկի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա, դրանցով նախատեսված լիազորությունների սահմաններում: Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները նշանակվում են Գլխավոր տնօրենի հրամանով և գործում են բանկի կողմից տրված լիազորագրի հիման վրա:
- 2.7 Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում և դադարեցնում են իրենց գործունեությունը Բանկի Դիտորդ Խորհրդի որոշմամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.8 Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:
- 2.9 Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական և փոխառու միջոցների տիրապետումը, տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները, մատուցվող ծառայությունների միջնորդավճարի չափը, գույքի վերագնահատումը:
- 2.10 Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակցող բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:
- 2.11 Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.12 Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:
- 2.13 Բանկն օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնությունները:
- 2.14 Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը պարտավորություն չեն կրում նրա (բանկի) պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

ՀՈԳՎԱԾ 3. ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ, ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկի բաժնետերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք կմասնակցեն Կանոնադրական կապիտալի ձևավորմանը և բարեխղճորեն կկատարեն բանկի հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները:

3.2. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն՝

ա) մասնակել բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին,

բ) մասնակցել բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ) ստանալ բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռի հաշվետվություններին և այլ վիճակագրական փաստաթղթերի տվյալներին,

ե) հայցով դիմել դատարան՝ բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով,

զ) բանկի լուծարման դեպքում ստանալ բանկի գույքի իր հասանելիք մասը,

է) օգտվել բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

3.3. Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

ա) ժամանակին կատարել հայտարարված Կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնետոմսերի վճարումը..

բ) չհրապարակել բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները.

գ) կատարել հիմնադիր փաստաթղթերի դրույթները.

դ) տեղյակ պահել բանկի Դիտորդ Խորհրդին փոխկապակցված անձանց և բանկի գործարքներում իրենց շահագրգռվածության մասին՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3.4. Բաժնետերերն իրավունք չունեն հետ պահանջելու բանկի Կանոնադրական հիմնադրամում կատարած իրենց գույքային ներդրումները:

3.5. Բանկի բաժնետերերի կազմից բաժնետիրոջ դուրս գալը իրականացվում է համաձայն սույն Կանոնադրության 3.7 կետի և գործող օրենսդրության պահանջների:

3.6. Այն բաժնետերը, որը կանոնավոր չի կատարում հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտականությունները և դրանով խոչընդոտում է բանկի գործունեությանը, կարող է գրկվել նոր բաժնետոմսերի կամ չգնված բաժնետոմսերի ձեռք բերելու իրավունքից՝ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ: Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող են սահմանվել դրամական պատժամիջոցներ՝ բաժնետոմսի դիմաց վճարման պարտավորությունների չկատարման համար: Նշված որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ձայների 3/4 -ով:

3.7. Բաժնետերն (համասեփականատերը) իրավունք ունի օտարելու իր բաժնետոմսերը (բաժնեմասը), ընդ որում, գնման նախապատվության իրավունքը տրվում է բանկի բաժնետերերին (համասեփականատերերին): Նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 օր բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից: Այդ ժամկետի լրանալուց հետո բաժնետերն (համասեփականատերը) իրավունք ունի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի համաձայնության դեպքում վաճառելու բաժնետոմսերը (բաժնեմասը) ոչ բաժնետեր հանդիսացող երրորդ անձանց՝ նույն գնով և մյուս հավասար պայմաններով, որոնցով դրանք առաջարկվել են բաժնետերերին (համասեփականատերերին): Երրորդ անձանց կողմից բաժնետոմսերի (բաժնեմասի) գնման վերաբերյալ դրական որոշումը Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովը պետք է կայացնի երրորդ անձի կողմից բաժնետոմսերի (բաժնեմասի) գնման վերաբերյալ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում, եթե այդ անձը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի և գործող օրենսդրության կողմից նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար սահմանված չափանիշներին:

Բանկի բաժնետերերի և երրորդ անձ ոչ բաժնետերերի միջև կնքված բաժնետոմսերի առուվաճառքի յուրաքանչյուր գործարք անօրինական է, եթե այդ գործարքի վերաբերյալ նախապես չի ընդունվել Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշում: Այդ գործարքների հետևանքով պատճառված վնասի համար բանկը և մնացած բաժնետերերը, բացառությամբ այն բաժնետիրոջ, որը հանդիսանում է գործարքի կողմ, պատասխանատվություն չեն կրում:

Անօրինական գործարքների հետևանքով բաժնետոմսեր ձեռք բերած երրորդ անձը չի օգտվում այդ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժին ստանալու և քվեարկության ժամանակ ձայնի իրավունքից:

3.8. Բանկի բաժնետոմսերը ենթակա չեն գրավադրման: Նման գործարքը համարվում է անվավեր: Սույն կետը խախտող բաժնետիրոջ նկատմամբ կարող են կիրառվել դրամական պատժամիջոցներ՝ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ:

3.9. Բանկի կողմից իր բաժնետոմսերը գեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը արգելվում է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3.10. Բաժնետեր քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի իրավահաջորդության դեպքում Բանկի բաժնետոմսերը անցնում են բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին՝ համաձայն Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշման:

Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից բաժնետոմսերի անցումը թույլատրող որոշում չընդունվելու դեպքում բաժնետոմսերը ենթակա են օտարման սույն կանոնադրության 3.7. կետով սահմանված կարգով:

**ՀՈԳՎԱԾ 4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ,
ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ**

4.1. Բանկի յուրաքանչյուր հասարակ անվանական բաժնետոմսի անվանական արժեքը 1.000.000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ է: Բանկի կանոնադրական հիմնադրամը 2.000.000.000 (երկու միլիարդ) Հայաստանի Հանրապետության դրամ է, որը հավասար է Բանկի կողմից տեղաբաշխված 2.000 (երկու հազար) հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց վճարված դրանց անվանական արժեքի հանրագումարին:

4.2. Մեկ հասարակ անվանական բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք: Հասարակ անվանական բաժնետոմսի ձևը սահմանված է ոչ փաստաթղթային:

4.3. Կանոնադրական կապիտալում ներդրումները կատարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

4.4. Յուրաքանչյուր բաժնետերը կամ փոխկապակցված անձինք, որոնք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով ցանկանում են ձեռք բերել նշանակալից մասնակցություն, պարտավոր են մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ վերջինիս նախնական համաձայնությունը ստանալու համար:

Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին դիմորդին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

4.5. Բանկը կարող է Կանոնադրական կապիտալը ավելացնել այն դեպքում, երբ թողարկված բոլոր բաժնետոմսերն իրենց անվանական արժեքով լրիվ վճարված են: Կանոնադրական կապիտալը ավելացվում է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կամ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով:

Բանկը, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ, կարող է միաձուլել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, մեծացնելով անվանական արժեքը կամ բաժանելով ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի: Որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի անվանական արժեքի վերանվանման չներկայացված բաժնետոմսերը ճանաչվում են անվավեր:

Միաձուլված (կոնսոլիդացված) բաժնետոմսերի շրջանառությունը և սեփականատերերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են սույն Կանոնադրությամբ, Հայնեարտրանկի միաձուլված (կոնսոլիդացված) բաժնետոմսերի Կանոնակարգով և Հայնեարտրանկի բաժնետոմսերի շրջանառության մասին կարգով:

4.6. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը կարող է ընդունվել Ընդհանուր ժողովի կողմից:

4.7. Կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում դրա գրանցման պահից:

4.8. Բաժնետոմսերի ձեռքբերումը կարող է իրականացվել լրիվ կամ տարաժամկետ վճարմամբ: Բաժնետոմսերի տարաժամկետ ձեռք բերման ժամանակ, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 տոկոսը:

Տարաժամկետ վճարմամբ ձեռք բերված բաժնետոմսերի գնորդին տրվում է տեղեկանք, որը փոխարինվում է ռեեստրից քաղվածքով ամբողջ գումարը մուծելուց հետո: Բաժնետոմսի գնորդը դրա թողարկումով պայմանավորված ձայնի իրավունքը ձեռք է բերում միայն նախատեսված ամբողջ գումարը մուծելուց հետո:

4.9. Բանկում վարվում է բանկի բաժնետոմսերի սեփականատերերի Ռեեստր: Ռեեստրի վարման համար պատասխանատու անձը նշանակվում է բանկի Գլխավոր տնօրենի կողմից:

4.10. Բաժնետոմսն անբաժանելի է: Այն դեպքում, երբ միևնույն բաժնետոմսը պատկանում է մի քանի անձանց, ապա նրանք բոլորը բանկի նկատմամբ համարվում են մեկ բաժնետեր և կարող են իրենց իրավունքներն իրականացնել իրենցից որևէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:

4.11. Բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել՝ նեռարյալ բանկի նկատմամբ պահանջների հաշվանցով չի թույլատրվում:

ՀՈԳՎԱԾ 5. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐԸ, ՇԱՀՈՒՅԹԸ և ԳՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

52. Կանոնադրական հիմնադրամից բացի, բանկում ձևավորվում է պահուստային հիմնադրամ: Բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ բանկում կարող են ձևավորվել այլ հիմնադրամեր, նախաձեռնելով Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգի:
52. Գահուստային հիմնադրամը ստեղծվում է հայտարարված Կանոնադրական կապիտալի 15 տոկոսի քանակով: Գահուստային հիմնադրամը կազմավորվում է շահույթից կատարվող տարեկան նախաճանաչումների հաշվին:
- Գահուստային հիմնադրամն օգտագործվում է բանկի գործունեության արդյունքում առաջացած այն վնասները (կորուստները) ծածկելու համար, որոնք համաձայն գործող օրենսդրության չեն մտնում բանկերի կողմից շահութահարկի վճարման նպատակով հարկման բազայի հաշվարկման համար նրանց հատուցված ծառայությունների ինքնարժեքի և բանկերի գործունեության ֆինանսական արդյունքներին վերագրվող ծախսերի կազմի մեջ:
- Գահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
53. Իր գործունեության արդյունքում բանկի ստացած շահույթը ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:
54. Գահուստային հիմնադրամ կատարվող փոխանցումներից ու բյուջետային հատկացումներից հետո մնացած շահույթը (զուտ շահույթը) մնում է բանկի տրամադրության տակ:
55. Շահութաբաժինները վճարվում են բանկի զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին: Շահութաբաժինը Բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է վճարվել բացառապես տարեկան արդյունքներով: Շահութաբաժինը վճարվում է դրամով: Բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները բանկի կողմից չեն երաշխավորվում:
56. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:
57. Բանկը իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել բանկի Կանոնադրական կապիտալը:
58. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը: Բանկը իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա Կանոնադրական կապիտալից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:

ՀՈԳՎԱԾ 6. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԵՆՆԵՐԸ

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ բանկի կառավարման բարձրագույն մարմինը.
- բանկի Դիրտորդ Խորհուրդը.
- բանկի Գլխավոր տնօրենը.

6.1. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

- 6.1.1. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը (համառոտ՝ ԲԸԺ) կազմված է բանկի բոլոր բաժնետերերի կամ նրանց կողմից նշանակված և նրանց լիազորություններով գործող ներկայացուցիչներից: ԲԸԺ-ին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել բանկի բաժնետեր չհանդիսացող բանկի Դիրտորդ Խորհրդի անդամները, Գլխավոր Տնօրենը և այլ գործադիր պաշտոնատար անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ժողովի նյութերում):
- 6.1.2. ԲԸԺ -ի իրավասությանն են վերաբերում հետևյալ հարցերը՝
- ա) բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, բանկի Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.,
 - բ) բանկի վերա կազմակերպումը,
 - գ) բանկի լուծարումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշիռների հաստատումը,
 - դ) բանկի Դիրտորդ Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի Դիրտորդ Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության մասին որոշումները ընդունվում են բացառապես

Բաժնետերերի Ընդհանուր Տարեկան Ժողովներում: Դիտորդ Խորհրդի անդամների ընտրության հարցն Բաժնետերերի Արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Դիտորդ Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով բանկի Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

է) բանկի Գլխավոր Տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ը) բանկի Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության մասին որոշումներն ընդունվում են բացառապես Բաժնետերերի Ընդհանուր Տարեկան Ժողովներում: Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Վերստուգող հանձնաժողովի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

թ) բանկի աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ժ) բանկի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են բացառապես Բաժնետերերի Ընդհանուր Տարեկան Ժողովներում:

ժա) բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժբ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

ժգ) բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում,

ժդ) բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետ գնումը օրենքով նախատեսված դեպքերում,

ժե) բանկի ղեկավար պաշտոնատար անձանց (Դիտորդ Խորհրդի նախագահի, Դիտորդ Խորհրդի անդամների, Գլխավոր տնօրենի, վերստուգող հանձնաժողովի նախագահի, վերստուգող հանձնաժողովի անդամների) աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,

ժզ) գործող օրենսդրությանը համաձայն բանկի բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող բանկի այլ արժեթղթերի բանկի բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժե) բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով,

ժը) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը օրենքով սահմանված կարգով և դեպքերում,

ժթ) բանկի կողմից դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, հողի իգալին ընկերությունների, առևտրային կազմակերպությունների և այլ միությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը,

ի) բանկի բաժնետիրոջ կողմից երրորդ անձին բաժնետոմսերը օտարելու կամ բաժնետոմսերը բաժնետիրոջ ժառանգորդին (իրավահաջորդին) անցնելու մասին որոշման ընդունումը,

իա) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունում:

Սույն կետով նախատեսված բոլոր հարցերով (բասառությամբ գ), ժդ), ժթ) ենթակետերում նշված հարցերի) որոշումների ընդունումը վերապահվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմիններին: Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ սույն կետի գ), ժդ) և ժթ) ենթակետերում նշված հարցերով որոշումների ընդունումը կարող է փոխանցվել Բանկի Դիտորդ Խորհրդին:

6.1.3. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին, գրանցվել են բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Զվորումի բացակայության դեպքում հայտարարվում է բանկի Բաժնետերերի նոր Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի բոլորարվում:

Բանկի բաժնետերերի չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովը իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

Բանկի բաժնետերերի ծանուցումը բանկի նոր Ընդհանուր ժողովի գումարման մասին կատարվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 10 օր շուտ:

6.1.4. Սույն հոդվածի 6.1.2. կետում քվարկված հարցերի վերաբերյալ Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ձայների 3/4-ով:

6.1.5. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

6.1.6. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները բանկի բաժնետերերին հաղորդվում են այդ որոշումները ընդունելու պահից 45 օրվա ընթացքում:

6.1.7. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ 6.1.2. կետի ժ) ենթակետի:

6.1.8. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

6.1.9. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելը ավարտելու պահից առնվազն 30 օր շուտ:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը հեռակա կարգով գումարելիս, բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են օրենքով նախատեսված նյութերը և տեղեկությունները:

6.1.10. Բանկի բաժնետերերը, ինչպես նաև բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ծանուցվում են բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի գումարման մասին նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով՝ պատվիրված նամակների ձևով կամ անձամբ հանձնելով:

6.1.11. Բանկը Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի մասին իր բաժնետերերին գրավոր ծանուցում է ուղարկում Ընդհանուր Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

6.1.12. Բանկի բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում, բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել բանկի Բաժնետերերի Ընդհանուր Տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Բանկի Դիտորդ Խորհրդի և Վերստուգող հանձնաժողովի անդամության փոփոխություններ:

Ընդհանուր Ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջադրման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ անվանումը, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը և առաջարկության հեղինակի ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերաբառադրությունը:

Բանկի Դիտորդ Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել՝ դրանք բանկի Ընդհանուր Տարեկան Ժողովում կամ փոփոխությունների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն կետով նշված ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում:

6.1.13. Բաժնետերերի Ընդհանուր տարեկան Ժողովը գումարվում է բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից մինչև վեց ամիս ժամկետում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Բաժնետերերի Ընդհանուր Ժողովները համարվում են արտահերթ:

Արտահերթ ժողովներ կարող են գումարվել ցանկացած ժամանակ Դիտորդ Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Գլխավոր տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի, բանկի ատոլիտի իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ բանկի՝ առնվազն 10 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ պահանջով:

6.1.14. Բանկի բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում բանկի Դիտորդ Խորհուրդը պետք է բանկի Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողով գումարի՝ պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

6.1.15. Բանկի Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ գումարումը մերժելու մասին բանկի Դիտորդ Խորհրդի որոշումը պետք է ընդունվի դրա պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրյա ժամկետում:

6.1.16. Բանկի բաժնետերերը բանկի Ընդհանուր Ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին միայն օրենքով սահմանված կարգով՝ լիազորագրի առկայության դեպքում:

6.1.17. Ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է 4.2 կետի համաձայն՝ փաստացի վճարված բաժնետոմսը՝ 1 ձայն սկզբունքով:

6.1.18. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի արձանագրությունը կազմվում է բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, երկու օրինակից, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

Բանկի բաժնետերերը իրավունք ունեն ծանոթանալ բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի արձանագրություններին:

6.2. ԲԱՆԿԻ ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՈՒՐԴԸ

6.2.1. Բանկի Դիտորդ Խորհրդի իրավասությունն է հանդիսանում բանկի գործունեության ընդհանուր ղեկավարման հետ կապված հարցերի լուծումը. բացառությամբ այն հարցերի, որոնք հանդիսանում են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությունը:

6.2.2. Բանկի Դիտորդ Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

- ա) բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- բ) օրենքով սահմանված կարգով բանկի Բաժնետերերի տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը,
- գ) բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի օրակարգի, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի օրակարգի հարցերի նախապես քննարկումը, բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերի լուծումը.
- դ) օրենքով սահմանված կարգով բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը,
- ե) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
- զ) օրենքով սահմանված կարգով պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխում,
- է) Ընդհանուր Ժողովի համար բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,
- ը) բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- թ) օրենքով սահմանված կարգով և դեպքերում՝ բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
- ժ) բանկի գործադիր պաշտոնատար անձանց կազմի որոշումը, նրանց պաշտոնի նշանակումը, աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ բանկի Գլխավոր տնօրենի նշանակման, վարձատրության պայմանների որոշման և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման,
- ժա) մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների ստեղծումը և գործունեության դադարեցումը, դրանց հիմնադիր փաստաթղթերի հաստատումը,
- ժբ) այլ կազմակերպություններում իր մասնակցության չափի որոշումը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չի համարվում,
- ժգ) բանկի աուդիտը իրականացնող անձի հետ պայմանագրի կնքումը և նրա վարձատրության չափի սահմանումը,
- ժդ) բանկի վարչակազմակերպչական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,
- ժե) բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- ժզ) բանկի բյուջեի հաստատումը,
- ժէ) օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Սույն կետով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Դիտորդ Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմիններին:

6.2.3. Բանկի Դիտորդ Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

6.2.4. Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել բանկի Դիտորդ Խորհրդի կազմում կամ Դիտորդ Խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:

6.2.5. Բանկի Դիտորդ Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել: Դիտորդ Խորհրդի անդամները ընտրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ սույն Կանոնադրության 6.1.2 կետի դ) ենթակետի նախաձայն: Դիտորդ Խորհրդի անդամները պետք է համապատասխանեն բանկային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին:

6.2.6. Բանկի Դիտորդ Խորհրդի Նախագահն ընտրվում է բանկի Դիտորդ Խորհրդի անդամների կողմից, Դիտորդ Խորհրդի անդամների կազմից՝ Դիտորդ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

6.2.7. Բանկի Դիտորդ Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում է բանկի Դիտորդ Խորհրդի աշխատանքները,
- գումարում է բանկի Դիտորդ Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
 - նախագահում է բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովներում:
- Բանկի Դիտորդ Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները բանկի Դիտորդ Խորհրդի որոշմամբ կատարում է բանկի Դիտորդ Խորհրդի անդամներից մեկը:

6.2.8. Բանկի Դիտորդ Խորհրդի նիստերը գումարվում են բանկի Դիտորդ Խորհրդի նախագահի կողմից՝

- բանկի Դիտորդ Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ,
- բանկի Դիտորդ Խորհրդի անդամի, բանկի Վերստուգող հանձնաժողովի, բանկի ատոլիտն իրականացնող անձի, բանկի Գլխավոր տնօրենի պահանջով:

Բանկի Գլխավոր տնօրենի պահանջով Դիտորդ Խորհրդի նիստը հրավիրվում է ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում:

6.2.9. Բանկի Դիտորդ Խորհուրդը համարվում է իրավասու, եթե նրա աշխատանքին մասնակցում է Դիտորդ Խորհրդի անդամների ընդհանուր թվի 3/4-ը:

Եթե բանկի Դիտորդ Խորհրդի անդամների քանակը նվազում է բանկի Կանոնադրության համաձայն սահմանված քանակական կազմի 3/4-ից, բանկը պետք է Դիտորդ Խորհրդում թափուր մնացած տեղերը լրացնելու կամ Դիտորդ Խորհրդի քանակական կազմը նվազեցնելու նպատակով հրավիրի Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողով, որի մասին որոշումը կայացնում է բանկի Դիտորդ Խորհուրդը՝ մնացած անդամների ձայներ պարզ մեծամասնությամբ:

6.2.10. Դիտորդ Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Դիտորդ Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ բանկի Դիտորդ Խորհրդի անդամը ունի միայն մեկ ձայն:

Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Դիտորդ Խորհրդի մեկ անդամից մյուսին չի քույրատրվում:

6.2.11. Բանկի Դիտորդ Խորհրդի նիստերին և նրա աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող են մասնակցել բանկի Գլխավոր տնօրենը, այլ գործադիր պաշտոնատար անձինք և Վերստուգող հանձնաժողովի անդամները:

6.2.12. Բանկի Դիտորդ Խորհուրդի նիստի հրավիրման ժամկետները և տեղը որոշում է Դիտորդ Խորհրդի նախագահը:

6.2.13. Դիտորդ Խորհրդի քարտուղարը, բանկի Դիտորդ Խորհրդի հրավիրման տեղի, ժամկետի մասին ոչ ուշ, քան 7 օր առաջ, առկա կապի միջոցներով տեղյակ է պահում Դիտորդ Խորհրդի անդամներին:

6.2.14. Եթե Դիտորդ Խորհրդի նախագահը գտնում է, որ բացառապես Դիտորդ Խորհրդի իրավասությանը ենթակա քննարկվելիք հարցի առնչությամբ Դիտորդ Խորհրդի նիստի հրավիրման անհրաժեշտություն չկա, ապա այն քննարկվում է հարցման միջոցով:

6.2.15. Բանկի Դիտորդ Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 օրյա ժամկետում:

Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

6.3. ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

6.3.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ Բաժնետերերի Ընդհանուր ժողովի և Դիտորդ Խորհրդի բացառիկ իրավասությանը հանդիսացող հարցերի:

6.3.2. Բանկի Գլխավոր տնօրենը՝

- գործում է ելնելով բանկի շահերից.
- տնօրինում է բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում բանկի անունից.
- ներկայացնում է բանկը ՀՀ -ում և արտասահմանում.
- տալիս է լիազորագրեր.
- գործում է առանց լիազորագրի.
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում բանկի աշխատակիցներին, Բանկի հաստիքացուցակով նախատեսված աշխատավարձի չափերի սահմաններում հաստատում է նրանց աշխատավարձի չափը, բացառությամբ Բանկի գործադիր պաշտոնատար անձանց աշխատանքի ընդունման, ազատման և աշխատավարձի սահմանման: Աշխատողների աշխատանքի ընդունման, Բանկում այլ աշխատանքի փոխադրման և աշխատանքից ազատման հրամանագիրքը վարելու և պահպանելու պարտականությունը կատարում է Բանկի Գլխավոր տնօրենի կողմից լիազորված պաշտոնատար անձը:
- բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

ՀՈԳՎԱԾ 7. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

7.1. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է Վերստուգող հանձնաժողովը, որը կազմվում է առնվազն 3 անդամից: Վերստուգող հանձնաժողովի կազմն ընտրվում է ԲԸԺ-ի կողմից՝ երեք տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել բանկի կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձինք:

Վերստուգող հանձնաժողովի նախագահը, վերստուգող հանձնաժողովի անդամը չի կարող լինել բանկի աշխատակից:

7.2. Վերստուգող հանձնաժողովի Նախագահը ընտրվում է Վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.3. Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները.

ա) հսկողություն է սահմանում բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ..

բ) բանկի Դիտորդ Խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին.

գ) եզրակացություններ է տալիս բանկի Դիտորդ Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ.

դ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.4. Վերստուգող հանձնաժողովը բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների վերաբերյալ պատրաստում է եզրակացություններ, որոնք բովանդակում են՝

- բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը,
- բանկի հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը,
- բանկի հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը,
- բանկի կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին,
- ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

7.5. Վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել բանկի Դիտորդ Խորհրդի կամ Վերստուգող հանձնաժողովի երկու անդամների պահանջով:

7.6. Վերստուգող հանձնաժողովը ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է ժողովին և բանկի Դիտորդ Խորհրդին: Այն կազմում է տարեկան հաշվետվությունների և հաշվեկշիռների վերաբերյալ եզրակացություններ:

7.7. Վերստուգման արդյունքներից ելնելով, Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի առաջարկություն ներկայացնելու բանկի Դիտորդ Խորհրդին, արտահերթ ԲԸԺ հրավիրելու մասին:

7.8. Վերստուգող հանձնաժողովը ստուգումներն իրականացնում է՝

- ա) ԲԸԺ-ի հանձնարարությամբ..
 - բ) սեփական նախաձեռնությամբ.
 - գ) 10 տոկոսից ավելի ձայներ ունեցող բաժնետերերի պահանջով.
 - դ) բանկի Դիտորդ Խորհրդի հանձնարարությամբ:
- Ստուգումները կատարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

7.9. Առանց Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունների, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովն իրավունք չունի հաստատելու բանկի տարեկան հաշվեկշիռը:

ՀՈԳՎԱԾ 8. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

8.1. Բանկի ֆինանսական տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը բանկում տարվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Բանկի գործունեության արդյունքներն արտացոլում են ամսական, եռամսյակային և տարեկան հաշվեկշիռներում, շահույթի և վնասների վերաբերյալ հաշվետվություններում, ինչպես նաև տարեկան հաշվետվության մեջ:

8.2. Բանկը, ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսյա ժամկետում հրապարակում է մամուլում իր հաշվեկշիռի և աուդիտային եզրակացության համառոտ ամփոփագիրը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Բանկը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

8.3. Բանկի տարեկան հաշվետվությունը ստուգվում և հաստատվում է աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀՈԳՎԱԾ 9. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9.1. Բանկի վերակազմակերպումը բանկի միացումն է մեկ այլ բանկի հետ կամ բանկի վերակազմավորումը այլ կազմակերպական-իրավական տեսակի:

9.2. Բանկի վերակազմակերպումը կատարվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

9.3. Բանկի վերակազմակերպումը, անկախ դրա իրականացման ձևից կամ եղանակից, իրականացվում է միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

ՀՈԳՎԱԾ 10. ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

10.1. Բանկը լուծարվում է հետևյալ դեպքերում՝

- ա) լիցենզիան անվավեր ճանաչելու.
- բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու.
- գ) բանկի ինքնալուծարման.
- դ) օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

10.2. Բանկի լուծարումը կատարում է Լուծարման հանձնաժողովը: Բանկի ինքնալուծարման դեպքում Լուծարման հանձնաժողովը նշանակում է բանկը, իսկ հարկադրական լուծարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի Լուծարման հանձնաժողովը ստեղծվում է բանկը լուծարելու, նրա գույքը վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն հինգ անդամներից, որոնց վա ընտրությունը կատարվում է բանկի միջոցներից:

Լուծարման հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատու են կրում օրենքով սահմանված կարգով:

10.3. Լուծարման հանձնաժողովը նշանակելու պահից նրան են անցնում բանկի գործերի կառավարման բոլոր լիազորությունները, այսինքն՝ Լուծարման հանձնաժողովը հանդիսանում է բանկի իրավահաջորդը:

10.4. Լուծարման հանձնաժողովը ստեղծելուց հետո երեք օրվա ընթացքում բանկը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է կենտրոնական բանկին, բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին:

10.5. Լուծարման հանձնաժողովը իր նշանակումից հետո երկշաբաթյա ժամկետում՝

- ա) հաշվեգրում և գնահատում է բանկի ակտիվներն ու պասիվները.
- բ) հայտնաբերում է բանկի պարտապաններին և սահմանում է բանկի կողմից տրված վարկերի ժամկետից շուտ վերադարձնելու կարգը.
- գ) միջոցներ է ձեռնարկում բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար.
- դ) միջոցներ է ձեռնակում բանկի նկատմամբ առկա պարտավորությունների ապահովման ուղղությամբ.

ե) որոշում է բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները բաժնետերերի միջև բաշխելու կարգը՝ բանկի Կանոնադրական կալիտալում նրանց ունեցած բաժնետասերին համապատասխան:

10.6. Լուծարման հանձնաժողովը առնվազն ամիսը մեկ անգամ Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվետվություն՝ իր գործունեության վերաբերյալ:

10.7. Լուծարման միջոցների բաշխումից հետո Լուծարման հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում Կենտրոնական բանկին՝ իր գործունեության արդյունքների վերաբերյալ:

Ներկայացված հաշվետվությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո, բանկը համարվում է լուծարված, իսկ Լուծարման հանձնաժողովն ազատվում է բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

Բանկի լուծարման մասին Կենտրոնական բանկում վարվող բանկերի գրանցումների մատյանում և ձեռնարկությունների պետական ռեգիստրում համապատասխան գրառում է կատարվում:

10.8. Լուծարման հանձնաժողովը բանկի լուծարման վերաբերյալ տեղեկանք է հրապարակում:

ՀՈԳՎԱԾ 11. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Բանկի գործունեության ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ առաջացած վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԳՎԱԾ 12. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Կանոնադրությունը կազմված է 3 օրինակից:

Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

